**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/27 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

03.09.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Ա. Քոչարյան
Ա. Հյուսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Է. Առուստամյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին**

---

(Մ. Աղայանց)

1.1 Գնման ընթացակարգի մասնակցի՝ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ և «Պլոտմեյկեր» ՍՊԸ կոնսորցիումի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մասնակցի կողմից ներկայացված «Ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր)» և «Էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ)» լիցենզիան և ներդիրները 3-րդ դասի են: Քանի որ գնման առարկան համարվում IV կատեգորիայի ռիսկայնության աստիճանի հասարակական նշանակության օբյեկտ, հետևաբար պահանջվող լիցենզիան և ներդիրները պետք է լինեն 1-ին դասի:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 04.09.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/27** ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender5@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 05.09.2025թ. ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________ Մ. Աղայանց

Անդամ՝ ________________ Հ. Գինովյան

________________ Տ. Կոմիտասյան

________________ Ա. Քոչարյան

________________ Ա. Հյուսիսյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ________________ Գ. Հակոբյան